**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՓՎ/09-2025**

**ՀԵՌԱԿԱ՝ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՄԱՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ, Մ-6, ՎԱՆԱՁՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (ԿՄ 38+450 ԿՄ 90 + 191 ՀԱՏՎԱԾ) ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ**

*22 հունվարի 2025 թվական*

| | |
|---|---|
| **ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝** | |
| ՀՀ փոխվարչապետ | Տ. Խաչատրյան |
| | |
| **ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝** | |
| ՀՀ էկոնոմիկայի նախարար | Գ. Պապոյան |
| ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար | Դ. Խուդաթյան |
| ՀՀ շրջակա միջավայրի նախարար | Հ. Սիմիդյան |
| ՀՀ արդարադատության նախարարի պարտականությունները կատարող (24.10.2024թ.) | Ա. Հարությունյան |
| ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի պարտականությունները կատարող (25.10.2024թ.) | Ա. Գուգարաց |
| ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ (ճանապարհային ոլորտը համակարգող) | Ք. Ղալեչյան |
| Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ (համաձայնությամբ, Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում, ճանապարհաշինության բնագավառը համակարգող տեղակալ) | Ս. Մաղաքյան |
| «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ ծրագրի ղեկավար (համաձայնությամբ) | Ա. Բաբայան |
| «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն | Ա. Ջոհրաբյան |

Խորհրդի նիստն անցկացվել է հեռակա՝ գրավոր հարցման կարգով: ՀՀ փոխվարչապետի գրասենյակից ս.թ. հոկտեմբերի 24-ի թիվ 03.1/03.62/36479-2024 գրությամբ Խորհրդի անդամներին ուղարկվել է օրակարգը և կից նյութերը՝ Խորհրդի անդամներին առաջարկվելով իրականացնել գրավոր քվեարկություն:

Խորհրդի անդամների կողմից օրակարգի վերաբերյալ առաջարկություններ կամ առարկություններ չեն ստացվել, ուստի օրակարգը համարվել է հաստատված:

Համաձայն Խորհրդի աշխատակարգի 13-րդ կետի և սույն նիստի գրավոր քվեարկության արդյունքների՝ Խորհուրդն օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումը.

**Օրակարգային 1-ին հարց՝** Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 4-ի, Քաջարան-Ագարակ հատվածի շինարարության Անկախ բնապահպանական մոնիթորինգի ծառայությունների ձեռքբերման վերաբերյալ:

**Որոշվեց՝**

1. Հաստատել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի և անհատ խորհրդատու Էդիտա Վարդգեսյանի միջև կնքվելիք թիվ T4-CS-06 պայմանագիրը:
2. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Ջոհրաբյանին՝ գործող կարգին համապատասխան անհատ խորհրդատու Էդիտա Վարդգեսյանի հետ սեղմ ժամկետում ստորագրել թիվ T4-CS-06 պայմանագիրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

24.01.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ